ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/4.3.1-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2025թ. մայիսի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստը:

Նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ,<br>Հանձնաժողովի նախագահ |
| Ս.Հովհաննիսյան | | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Դ.Կարապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ |
| Ա.Բաբայան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Լ.Բասմաջյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Ձ.Հայրապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

***Լսեցին՝***

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. զբոսաշրջության և/կամ հյուրընկալության ոլորտի աշխատողների համար (դասընթացներ)»** 4.3.1 ենթամիջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «ԹԱԹՅՈՍԱ» ՍՊԸ-ի (28,310.0 հազար ՀՀ դրամ),
- «ՎԻՍՏԱԱ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» խորհրդատվական ՀԿ-ի (28,004.5 հազար ՀՀ դրամ),
- «Մշակույթի և զբոսաշրջության կայուն զարգացում» ՀԿ-ի (33,936.0 հազար ՀՀ դրամ) կողմից :

***Լսեցին՝***

Հայտերի գնահատման ժամկետի սահմանման մասին:

***Որոշեցին՝***

Հայտերի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2025թ. մայիսի 16-ը, ժամը 15⁰⁰-ն:

***Լսեցին՝***

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

***Որոշեցին՝***

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2025թ. մայիսի 16-ին, ժամը 17⁰⁰-ին:

Ա.Մկրտչյան
(Հանձնաժողովի նախագահ) - ____________

Ս.Հովհաննիսյան - ____________

Դ.Կարապետյան - ____________

Ա.Բաբայան - ____________

Հ.Սահակյան - ____________

Լ.Բասմաջյան - ____________

Ձ.Հայրապետյան - ____________

Շ.Հովսեփյան - ____________